

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 21

«Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի

գիտական խորհրդի 04. 12. 2017թ. նիստի

Գիտական խորհրդի նիստը կայացավ ք. Գյումրի, Պ. Սևակ 4 հասցեում:

Նիստին ներկա էին գիտական խորհրդի 29 (քսանին) անդամից 22-ը (քսաներկուսը):

1. **Մինասյան Մահակ Գարուշի** — Գիտական խորհրդի նախագահ, ռեկտոր
2. **Տարմանյան Անահիտ Ժորայի** — Գիտական քաղաքականության և արտաքին համագործակցության կառավարման կենտրոնի տնօրեն-պրոռեկտոր
3. **Սերոբյան Երվանդ Սերյոժի** — Ուսումնամեթոդական գործընթացի կառավարման և գործատուների հետ համագործակցության կենտրոնի տնօրեն-պրոռեկտոր
4. **Պետրոսյան Կարինե Ռահիմի** — Գիտական քարտուղար, կենսաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ
5. **Խաչատրյան Վալերի Գրիգորի** — Արհեստակցական կազմակերպության նախագահ
6. **Պողոսյան Բագրատ Ժորայի** – Բնագիտամաթեմատիկական ֆակուլտետի դեկան, մաթեմատիկայի, ֆիզիկայի և տեղեկատվական տեխնոլոգիաների ամբիոնի դասախոս, ֆիզմաթ. գիտությունների թեկնածու, դոցենտ
7. **Խաչատրյան Թերեզա Արթուրի** — Ուսումնագիտական խորհրդատվական կենտրոն- գրադարանի տնօրեն
8. **Սարգսյան Արմենուհի Հակոբի** — ֆիզմաթ. գիտությունների թեկնածու, դոցենտ, որակի ապահովման և կառավարման կենտրոնի տնօրեն
9. **Ռաֆֆի Քալաջյան Վաղինակի** — Ֆինանսատնտեսական վերլուծությունների ծրագրավորման և հաշվապահական հաշվառման բաժնի վարիչ- գլխավոր հաշվապահ
10. **Սարգսյան Մամվել Հովհաննեսի** — ֆիզմաթ. գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, մաթեմատիկայի, ֆիզիկայի և տեղեկատվական տեխնոլոգիաների ամբիոնի պրոֆեսոր
11. **Հովհաննիսյան Անահիտ Սերյոժայի** — Բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, անգլերեն լեզվի և գրականության ամբիոնի պրոֆեսոր
12. **Դրմեյան Հենրիկ Ռուբենի** — Տեխնիկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, մաթեմատիկայի, ֆիզիկայի և տեղեկատվական տեխնոլոգիաների ամբիոնի պրոֆեսոր
13. **Մարդոյան Ռուզաննա Արամայիսի** — Մանկավարժության ֆակուլտետի դեկան, մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, մանկավարժության ամբիոնի պրոֆեսոր
14. **Մելիքյան Թամարա Հմայակի** — Հումանիտար գիտությունների և արվեստի ֆակուլտետի դեկան, մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ, ռուսաց լեզվի և գրականության ամբիոնի դոցենտ

15. **Տեր-Ադամյան Շուշանիկ Վոլոդյայի** — Բանասիրական գիտությունների թեկնածու, միջմշակութային հաղորդակցության և զբոսաշրջության ամբիոնի ասիստենտ
16. **Ղուկասյան Լուսիկ Հենրիկի** — Մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ, մանկավարժության ամբիոնի դոցենտ
17. **Հակոբյան Լիզա Հելբերդի** — Մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ, մանկավարժության ամբիոնի դոցենտ
18. **Մարտիրոսյան Լևոն Մովսեսի** — Աշխարհագրական գիտությունների թեկնածու, դոցենտ, աշխարհագրության, կենսաբանության և քիմիայի ամբիոնի դոցենտ
19. **Արամյան Կարեն Արմենի** — ՇՊՀ ՈԻԽ նախագահ, ռազմական ամբիոն «Նախագորակոչային և ֆիզիկական պատրաստություն» 4-րդ կուրսի ուսանող
20. **Խաչատրյան Լիլիթ Վարդանի** — Մանկավարժության ֆակուլտետ, «Մանկավարժություն և մեթոդիկա», 4-րդ կուրսի ուսանողուհի
21. **Մելքոնյան Արմեն Գրիգորի** — Սոցիալական գիտությունների և իրավունքի ֆակուլտետ, «Պատմություն» 2-րդ կուրսի ուսանող (մագիստրատուրա)
22. **Չարչոլյան Արթուր Էդվարդի** — Սոցիալական գիտությունների և իրավունքի ֆակուլտետ, «Պատմություն» 2-րդ կուրսի ուսանող

Օրակարգ

1. «Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամում իրականացված ուսումնասիրության արդյունքում կազմված հաշվետվության մեջ ներառված թերությունների և բացթողումների շտկման վերաբերյալ բուհում ձեռնարկված միջոցառումների մասին

Հաղ՝ Ս. Մինասյան

2. 2017-2018 ուստարվա բակալավրիատի և մագիստրատուրայի ընդունելության արդյունքների մասին

Հաղ՝ ՈԻսումնամեթոդական գործընթացիՊ կառավարման և գործատուների հետ համագործակցության կենտրոնի տնօրեն- պրոռեկտոր Ե. Սերոբյան

3. ՇՊՀ ռեկտորատի կանոնակարգի հաստատման մասին

Հաղ՝ գիտքարտուղար՝ Կ. Պետրոսյան

4. «Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի գիտական գործունեության համար ներքուհական դրամաշնորհի տրամադրման լրամշակված կարգի հաստատման մասին

Հաղ.՝ գիտական քաղաքականության և արտաքին համագործակցության կառավարման կենտրոնի տնօրեն- պրոռեկտոր՝ Ա. Ֆարմանյան

5. Ընթացիկ հարցեր

5.1 Բակալավրիատի կրթական ծրագրով մինչև 64 լսարանային ժամով առարկաների և IV կուրսերի ամփոփիչ ստուգումների ժամանակացույցի փոփոխման մասին

Հաղ՝ Ուսումնամեթոդական գործընթացիՊ կառավարման և գործատուների հետ համագործակցության կենտրոնի տնօրեն- պրոռեկտոր Ե. Սերոբյան

5.2 Խաչատուր Գեորգիի Յուզբաշյանի «Կոխ հայկական ըմբշամարտի երկու հիմնական տարատեսակների (արևելահայկական և արևմտահայկական)» ուսումնական նձեռնարկի տպագրության երաշխավորելու մասին

Հաղ՝ Գիտական քաղաքականության և արտաքին համագործակցության կառավարման կենտրոնի տնօրեն-պրոռեկտոր՝ Ա. Ֆարմանյան,

5.3 «Վերջավոր էլեմենտների մեթոդի զարգացումը և կիրարկումը միկրոպոլյար առաձգական բարակ ձողերի, սալերի և թաղանթների տեսությունների եզրային խնդիրների թվային լուծումների կառուցման համար» թեմատիկ՝ Գիտական պետական կոմիտեի կողմից ֆինանսավորվող թեմայի ամփոփիչ հաշվետվություն

Հաղ՝ Մաթեմատիկայի, ֆիզիկայի և տեղեկատվական տեխնոլոգիաների ամբիոնի պրոֆեսոր՝ Ս. Մարգարյան

5.4 «Գիտական քաղաքականության մշակման, գիտահետազոտական գործունեության զարգացման ռազմավարական ծրագրի մշակման, գնահատման և վերահսկման» և «Միջազգայնացման զարգացման ռազմավարական ծրագրի մշակման, գնահատման և վերահսկման» ժամանակավոր հանձնաժողովների ստեղծման մասին

Հաղ՝ Գիտական քաղաքականության և արտաքին համագործակցության կառավարման կենտրոնի տնօրեն-պրոռեկտոր՝ Ա. Ֆարմանյան

1.ԼՍԵՑԻՆ՝

«Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամում իրականացված ուսումնասիրության արդյունքում կազմված հաշվետվության մեջ ներառված թերությունների և բացթողումների շտկման վերաբերյալ բուհում ձեռնարկված միջոցառումների մասին

Ռեկտոր Ս. Մինասյանը, դիմելով նիստին ներկա անդամներին, իր խոսքում նշեց, որ դեռևս 10 օր առաջ գիտական խորհրդի անդամներին և բուհի ստորաբաժանումների ղեկավարներին ուղարկվել են ինչպես ՇՊՀ-ում ՀՀ ԿԳՆ կողմից իրականացված ստուգումների արդյունքում կազմված հաշվետվությունն ու հաշվետվության ամփոփ ներկայացումը տեղեկանքի տեսքով, այնպես էլ հաշվետվության մեջ ներառված թերությունների և բացթողումների շտկման վերաբերյալ ձեռնարկված միջոցառումները, միջոցառումների ժամանակացույցն ու որոշ կետերի վերաբերյալ դիտարկումները: Վերջիններս կազմվել են ՇՊՀ-ի պրոռեկտորներ Ե. Սերոբյանի, Ա. Ֆարմանյանի և նախկին պրոռեկտոր, ներկայիս բնագիտամաթեմատիկական ֆակուլտետի ղեկանի ժ/պ Բ. Պողոսյանի կողմից:

Նշեց, որ վերջին շրջանում բուհին վերաբերող շահարկումները ցավալիորեն դարձել են համապետական քննարկման խնդիրներ` ոչ մի աղերս չունեն բուհի ուսումնագիտական և կառավարման գործունեության հետ: Դրանք բուհից դուրս որոշ մարդկանց անձնական շահերի արդյունք են, որին բուհի 400 աշխատակցից ոմանք կարող էին ինչ-որ ձևով աջակցել, ինչն էլ, թերևս, օրինաչափ է...

Սակայն, զերծ մնալով դրանց վերլուծությունից, ռեկտորի նախաձեռնությամբ գիտխորհրդում քննարկվեցին միայն ուսումնագիտական գործունեությանն ու կառավարմանը առնչվող հարցերը, որոնք արտահայտված են ՇՊՀ-ում ՀՀ ԿԳՆ կողմից իրականացված ստուգումների արդյունքում կազմված հաշվետվության մեջ ներառված թերությունների և բացթողումների շտկման վերաբերյալ ձեռնարկված միջոցառումների ժամանակացույցում:

Ռեկտորը ներկայացրեց, որ հաշվետվության մեջ նշված դիտարկումները աշխատանքային շտկվող բացթողումներ են, մինչդեռ անհարկի շահարկումների արդյունքում դրանք չափազանց ուռձացվեցին, այսինքն` ինչ-ինչ խնդիրների համադրմամբ գործադրվեց «հնարք» բուհը և բուհի ռեկտորին վարկաբեկելու համար: Չհասնելով ցանկալիին` մինչև օրս շարունակում են փորձը բուհի աշխատանքը ապակայունացնելու` ցանկացած ձեռնարկ անհարկի շահարկելով: Անցած երկու ամիսների ընթացքում բուհի ստորաբաժանումների ղեկավարների և պրոֆեսորադասախոսական համակազմի` ռեկտորի հետ, ինչպես նաև առանձին քննարկումների արդյունքում բոլորը եկել են այն եզրահանգման, որ ամեն ինչ շինծու է եղել: Նշվեց, որ բուհի հեղինակության հետ կապված ցանկացած շինծու սադրանք և շահարկում կստանա իր համապատասխան գնահատականը. ապրում ենք իրավական երկրում: Այնուհետև հավելվեց, որ համալսարանի աշխատանքային անդորրի և նպաստավոր բարեկիրթ միջավայրի ապահովման համար պատասխանատու է ինքը և հորդորեց ապավինել իրեն:

Թերությունների և բացթողումների շտկման վերաբերյալ ձեռնարկված միջոցառումների ժամանակացույցում ներառված թերացումներից մեծ մասն արդեն շտկվել են 2017.10.02-ի գիտական խորհրդի թիվ 18 նիստով, իսկ մյուս թերությունները կշտկվեն` ըստ կազմված ժամանակացույցի:

Սակայն, ըստ Ս. Մինասյանի, դրանով չպետք է բավարարվել, քանի որ այն կենդանի զարգացող գործընթաց է և շարունակական զարգացման ու բարելավման կարիք ունի: Իսկ թերություններից որոշները, չնայած գործընթացի կանառնակարգային ճիշտ իրականացմանը, արդյունք են թերի փաստաթղթավորման, որոնց շտկման համար մշակվում են և կգործարկվեն համապատասխան կարգեր:

Գիտական խորհրդի անդամները, հիմք ընդունելով Ե. Սերոբյանի, Ա. Ֆարմանյանի և Բ. Պողոսյանի կողմից ներկայացված մեկնաբանությունները, ինչպես նաև ուսումնասիրությունների առիթով տրվող շահարկումների վերաբերյալ ռեկտոր Ս. Մինասյանի հաղորդումը. պրոֆեսոր Ս. Սարգսյանի առաջարկությամբ.

ՈՐՈՇԵՑԻՆ`

Հաստատել ՇՊՀ-ում ՀՀ ԿԳՆ կողմից իրականացված ստուգումների արդյունքում կազմված հաշվետվության մեջ ներառված թերությունների և բացթողումների շտկման վերաբերյալ ձեռնարկված միջոցառումների ժամանակացույցը և ներկայացնել ԿԳՆ:

ՔՎԵԱՐԿԵՑԻՆ՝

22 անդամ. կողմ՝ 22, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

2.ԼՍԵՑԻՆ՝

2017-2018 ուստարվա բակալավրիատի և մագիստրատուրայի ընդունելության արդյունքների մասին

Հաղ՝ Ուսումնամեթոդական գործընթացիՊ կառավարման և գործատուների հետ համագործակցության կենտրոնի տնօրեն- պրոռեկտոր Ե. Սերոբյան

Պրոռեկտոր Ե. Սերոբյանը ներկայացրեց ՇՊՀ – ում 2017 – 2018 ուստարվա բակալավրիատի և մագիստրատուրայի ընդունելության արդյունքները.(հաղորդումն ամբողջությամբ կցված է արձանագրությանը)

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝ ռեկտոր **Ս. Մինասյանը** արտահայտեց մի նկատառում, ըստ որի անվճար ուսուցման համակարգի (պետական պատվերի) շրջանակներում ուսանողների քանակի բաշխման գործընթացի վերաբերյալ ամբիոնների քննարկումներն ու որոշումները գրավոր ներկայացվել են բուհի ուսումնամեթոդական կենտրոն, սակայն անհրաժեշտ է մեկ անգամ ևս այս հարցի շուրջ քննարկում կազմակերպել, քանի որ մեր համալսարանին հատկացված է 71 պետական պատվերի տեղ, իսկ ամբիոններից 76 տեղ է նշվել, անհրաժեշտ է 4 տեղի համար բաշխման ճշտում կատարել: Ռեկտորը հորդորեց ամբիոնի վարիչներին, որ քննարկված բոլոր հարցերը արձանագրված լինեն ամբիոնում:

Ա. Ֆարմանյանը՝ նշելով, որ Ե. Սերոբյանի հաղորդումը 2017-2018 ուստարվա բակալավրիատի և մագիստրատուրայի ընդունելության արդյունքների մասին դեռևս տեղեկատվություն է և դեկտեմբերին նորից պետք է անդրադառնալ այս հարցին վերլուծություններ կատարելու համար, քանի որ կրթական ծրագրերի ավելացման պայմաններում և նախնական դիտարկման հիման վրա կավելանա նաև ոչ համալրված խմբերի քանակը: Հաջորդ տարվա համար պետք է նախատեսել կրթական ծրագրերի պահանջը, իսկ մագիստրատուրայի ընդունելության կարգը պետք է լրամշակվի:

ՈՐՈՇԵՑԻՆ՝

Հաղորդված տեղեկատվությունը ընդունել ի գիտություն:
Քվեարկեցին՝

22 անդամ. կողմ՝ 22, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

3.ԼՍԵՑԻՆ՝

ՇՊՀ ռեկտորատի կանոնակարգի հաստատման մասին

Հաղ՝ գիտքարտուղար՝ Կ. Պետրոսյան

Գիտքարտուղար Կ. Պետրոսյանը ներկայացրեց, որ կանոնակարգի լրամշակված տարբերակը էլեկտրոնային հաղորդագրությամբ նախորոք ուղարկվել է գիտխորհրդի անդամներին՝ քննարկելու և նախկին կանոնակարգի համեմատությամբ (ԳՊՄԻ ՊՈԱԿ-ի 24 մայիս 2013թ.-ի գիտական խորհրդում հաստատված) շատ տարբերություններ չկան:

ՈՐՈՇԵՑԻՆ՝

Հաստատել ՇՊՀ ռեկտորատի լրամշակված կանոնակարգը
ՔՎԵԱՐԿԵՑԻՆ՝

22 անդամ. կողմ՝ 22, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

4.ԼՄԵՑԻՆ՝

«Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի գիտական գործունեության համար ներբուհական դրամաշնորհի տրամադրման լրամշակված կարգի հաստատման մասին

Հաղ.՝ գիտական քաղաքականության և արտաքին համագործակցության կառավարման կենտրոնի տնօրեն- պրոռեկտոր՝ Ա. Ֆարմանյան

Պրոռեկտոր Ա. Ֆարմանյանը հակիրճ ներկայացրեց «Շիրակի մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի գիտական գործունեության համար ներբուհական դրամաշնորհի տրամադրման կարգի լրամշակման անհրաժեշտությունը, նպատակը (կցված է արձանագրությանը) և կանգ առավ լրամշակված կարգի որոշ դրույթների մեկնաբանման վրա:

Ա. Ֆարմանյանը նշեց, որ 2016թ. -ի հայտարարված մրցույթով բուհում 2017թ. -ին երեք ֆինանսավորվող թեմա է իրականացվում: Թեմաների ընտրության, գրախոսման, ֆինանսավորման ընթացքում տեխնիկական բազմաթիվ խնդիրներ են առաջացել, որոնք էլ կարգում որոշ հարցերի լրամշակման պատճառ հանդիսացան: Տիկին Ֆարմանյանը առանձնակի անդրադարձավ կարգի լրամշակված 2-րդ, 3-րդ և 6-րդ կետերին:

2-րդ կետի հետ, այն է. «Դրամաշնորհը Համալսարանի գիտական գործունեության ներքին ֆինանսավորման ձևերից է և միտված է Համալսարանի պրոֆեսորադասախոսական կազմի և ուսանողական համակազմի գիտական գործունեության հետագա զարգացմանը, ուսումնական գործընթացում հետազոտական աշխատանքների արդյունքների ներդրմանը»անհամաձայնություն հայտնեցին.

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝ Լ. Մարտիրոսյանը, ըստ նրա . ուսումնական գործընթացում հետազոտական աշխատանքների արդյունքների ներդրումը նեղացնում է գիտական գործունեությունը:

Ս. Մարգարյանը-գտնում է, որ եթե թեման գիտական գործունեությանն է միտված, ապա պարտադիր չէ, որ այն ուսումնական գործընթացներում պետք է ներդրվի և ցանկացած գիտական թեմա կարող է մրցույթով ընտրվել:

Ա. Ֆարմանյանը չհամաձայնելով Լ. Մարտիրոսյանի և Ս. Մարգարյանի տեսակետներին՝ նշեց, որ ըստ բուհի առաքելության և դրամաշնորհների տրամադրման կարգի գիտական գործունեությունը պետք է ուսումնական գործընթացին շահակապված լինի: Նա անդրադարձավ «գիտական գործունեություն» և «հետազոտական համալսարան» հասկացությունների կապին՝ նշելով, որ գիտական գործունեություն ծավալելու համար բուհը ընձեռնում է բազմաթիվ հնարավորություններ(դիցուկ՝ Հորիզոն 2020 և այլն):

Ռեկտոր Ս. Մինասյանն առաջարկեց հաստատել կարգը, բացառությամբ 2-րդ վիճելի կետի, որի հստակեցման համար ստեղծել աշխատանքային խումբ՝ կազմում ընդգրկելով Ա. Ֆարմանյանին, Ս. Մարգարյանին, Ե. Սերոբյանին, Լ. Մարտիրոսյանին, Ա. Մարգարյանին և Հ. Դրմեյանին, քննարկել ժամկետ սահմանելով մինչև դեկտեմբերի 8-ը ներառյալ, և զետեղել կարգում:

«Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի գիտական գործունեության համար ներբուհական դրամաշնորհի տրամադրման լրամշակված կարգը կցված է արձանագրությանը, լրամշակված կետերը արտահայտված են շեղագիր:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ հաստատել «Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի գիտական գործունեության համար ներբուհական դրամաշնորհի տրամադրման լրամշակված կարգը:

ՔՎԵԱՐԿԵՑԻՆ՝

22 անդամ. կողմ՝ 22, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

5.1 ԼՄԵՑԻՆ՝

Բակալավրիատի կրթական ծրագրով մինչև 64 լսարանային ժամով առարկաների և IV կուրսերի ամփոփիչ ստուգումների ժամանակացույցի փոփոխման մասին

Հաղ` Ուսումնամեթոդական գործընթացի կառավարման և գործատուների հետ համագործակցության կենտրոնի տնօրեն- պրոռեկտոր Ե. Սերոբյան

Պրոռեկտոր Ե. Սերոբյանը ներկայացրեց, որ ֆակուլտետների ղեկանների և ամբիոնի վարիչների ժամանակավոր պաշտոնակատարների հետ խորհրդակցությունների արդյունքում պարզվեց ուսումնական պլաններով նախատեսված պարապմունքների ամբողջ ծավալով իրականացման, ինչպես նաև ուսանողներին ամփոփիչ ստուգումներին նախապատրաստվելուն բավարար ժամանակ տրամադրելու համար առավել նպատակահարմար է N 168 հրամանով նախատեսված ժամանակացույցը մասամբ փոփոխել (հաղորդումը՝ կատարված փոփոխություններով ամբողջությամբ կցված է արձանագրությանը)։

ՈՐՈՇԵՑԻՆ`

Ուսումնական պլաններով նախատեսված պարապմունքների ամբողջ ծավալով իրականացման, ինչպես նաև ուսանողներին ամփոփիչ ստուգումներին նախապատրաստվելուն բավարար ժամանակ տրամադրելու համար առավել նպատակահարմար է N 168 հրամանով նախատեսված ժամանակացույցը մասամբ փոփոխել։

- 1.բակալավրի առկա ուսուցման համակարգում մինչև 64 լսարանային ժամով առարկաների առաջին կիսամյակում ամփոփիչ ստուգումներն իրականացնել 2018 թ.-ի հունվարի 8-ից 20-ն ընկած ժամանակահատվածում,
- 2.իսկ չորրորդ կուրսի առաջին կիսամյակում, անկախ լսարանային ժամերի ծանրաբեռնվածությունից, իրականացնել միայն ամփոփիչ ստուգում՝ 2018թ.-ի հունվարի 8-ից 30-ն ընկած ժամանակահատվածում:

ՔՎԵԱՐԿԵՑԻՆ`

22 անդամ. կողմ՝ 22, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

5.2 ԼՍԵՑԻՆ`

Խաչատուր Գեորգիի Յուզբաշյանի «Կոլի հայկական ըմբշամարտի երկու հիմնական տարատեսակների (արևելահայկական և արևմտահայկական) ուսումնական ձեռնարկի տպագրության երաշխավորելու մասին

Հաղ` Գիտական քաղաքականության և արտաքին համագործակցության կառավարման կենտրոնի տնօրեն-պրոռեկտոր Ա. Ֆարմանյան

ՈՐՈՇԵՑԻՆ`

Խաչատուր Գեորգիի Յուզբաշյանի «Կոլի հայկական ըմբշամարտի երկու հիմնական տարատեսակների (արևելահայկական և արևմտահայկական) ուսումնական ձեռնարկը երաշխավորել տպագրության:

ՔՎԵԱՐԿԵՑԻՆ`

22 անդամ. կողմ՝ 22, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

5.3 ԼՍԵՑԻՆ`

«Վերջավոր էլեմենտների մեթոդի զարգացումը և կիրարկումը միկրոպոլյար առաձգական բարակ ձողերի, սալերի և թաղանթների տեսությունների եզրային խնդիրների թվային լուծումների կառուցման համար» թեմատիկ` Գիտական պետական կոմիտեի կողմից ֆինանսավորվող թեմայի ամփոփիչ հաշվետվություն

ՈՐՈՇԵՑԻՆ՝

Հաստատել պրոֆեսոր Ս. Սարգսյանի «Վերջավոր էլեմենտների մեթոդի զարգացումը և կիրարկումը միկրոպոլյար առաձգական բարակ ձողերի, սալերի և թաղանթների տեսությունների եզրային խնդիրների թվային լուծումների կառուցման համար» թեմատիկ՝ Գիտական պետական կոմիտեի կողմից ֆինանսավորվող թեմայի ամփոփիչ հաշվետվությունը:

ՔՎԵԱՐԿԵՑԻՆ՝

22 անդամ. կողմ՝ 22, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

5.4 ԼՄԵՑԻՆ՝

«Գիտական քաղաքականության մշակման, գիտահետազոտական գործունեության զարգացման ռազմավարական ծրագրի մշակման, գնահատման և վերահսկման» և «Միջազգայնացման զարգացման ռազմավարական ծրագրի մշակման, գնահատման և վերահսկման» ժամանակավոր հանձնաժողովների ստեղծման մասին

Հաղ՝ Գիտական քաղաքականության և արտաքին համագործակցության կառավարման կենտրոնի տնօրեն-պրոռեկտոր՝ Ա. Ֆարմանյան

Պրոռեկտոր Ա. Ֆարմանյանը ներկայացրեց, որ ՇՊՀ-ի կանոնադրության 48-րդ կետի 13-րդ ենթակետի համաձայն թույլատրվում է ստեղծել ժամանակավոր հանձնաժողովներ:

Տիկին Ֆարմանյանը նշեց, որ վերոգրյալ հանձնաժողովները 2-ն են՝

«Գիտական քաղաքականության մշակման, գիտահետազոտական գործունեության զարգացման ռազմավարական ծրագրի մշակման, գնահատման և վերահսկման» և «Միջազգայնացման զարգացման ռազմավարական ծրագրի մշակման, գնահատման և վերահսկման» անվանումներով:

Հանձնաժողովների աշխատակարգերը գիտական խորհրդի քննարկմանը կներկայացվի հանձնաժողովների կազմերի հաստատումից հետո:

ՈՐՈՇԵՑԻՆ՝

1. Հաստատել «Գիտական քաղաքականության մշակման, գիտահետազոտական գործունեության զարգացման ռազմավարական ծրագրի մշակման, գնահատման և վերահսկման» ժամանակավոր հանձնաժողովը հետևյալ կազմով.

Նախագահ. Սամվել Սարգսյան՝ գիտ. դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, անդամներ. Հենրիկ դրմեյան՝ գիտ. դոկտոր, պրոֆեսոր, Ռուզաննա Մարդոյան՝ գիտ. դոկտոր, պրոֆեսոր, Թամարա Մելիքյան՝ գիտ. թեկնածու, դոցենտ, Հովհաննես Խորիկյան՝ գիտ. թեկնածու, դոցենտ, Լևոն Մարտիրոսյան՝ գիտ. թեկնածու, դոցենտ, Վարդան Մանուկյան՝ գիտ. թեկնածու, դոցենտ:

2. Հաստատել «Միջազգայնացման զարգացման ռազմավարական ծրագրի մշակման, գնահատման և վերահսկման» ժամանակավոր հանձնաժողովը հետևյալ կազմով.

Նախագահ. Բագրատ Պողոսյան՝ բնագիտամաթեմատիկական ֆակուլտետի դեկանի ԺՊ, անդամներ. Անահիտ Հովհաննիսյան՝ անգլերեն լեզվի և գրականության ամբիոնի վարիչի ԺՊ, Էլվիրա Զարգարյան՝ ուսումնամեթոդական գործընթացի կառավարման և գործատուների հետ համագործակցության կենտրոնի գլխավոր մասնագետ, Հեղինե Բսահակյան՝ անգլերեն լեզվի և գրականության ամբիոնի դոցենտ, Լուսինե Տոնոյան՝ անգլերեն լեզվի և գրականության ամբիոնի դոցենտ:

ՔՎԵԱՐԿԵՑԻՆ՝

22 անդամ. կողմ՝ 22, դեմ՝ 0, ձեռնպահ՝